

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2019-10-1-Ա

ք. Երևան

24.10.2019թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2019 թվականի հոկտեմբերի 24-ի նիստում քննարկեց 2019 թվականի հուլիսի 22-ին արտոնագրային հավատարմատար Ներսես Իսաջանյանի կողմից ներկայացված՝ GULBAHAR TOBACCO INTERNATIONAL FZE (P.o. Box 61401, Jebel Ali Free Zone, Dubai, United Arab Emirates, AE) ընկերության բողոքը (No20181830) «MILANO» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 93-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների կամ ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցերում: Տվյալ դեպքում հայտարկված նիշի գրանցումը ենթակա է մերժման, քանի որ նշանում առկա «MILANO» բառային տարրը սպառողին մոլորության մեջ կզգի արտադրողի վերաբերյալ հարցում, այսինքն՝ միջին սպառողի մոտ կարող է տպավորություն ստեղծվել, որ ապրանքն արտադրված է Իտալիայում իտալական ընկերության կողմից, սակայն նշանը ներկայացված է արաբական ընկերության անունից: Ինչպես նաև Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշի գրանցումը ենթակա է մերժման, քանի որ այն շփոթելու աստիճան նման է նույնատիպ ապրանքների համար Հայաստանի

Հանրապետությունում միջազգային գրանցման հիման վրա պահպանվող «PRADA MILANO» (PRADA S.A. 23, rue Aldringen L-1118 Luxembourg (LU), IR 681246, 18.08.1997) համակցված ապրանքային նշանին: Կարգի 119-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն բառային ապրանքային նշաններին նման են համարվում համակցված ապրանքային նշանները, որոնց մեջ ընդգրկված են բառային տարրեր: Տվյալ դեպքում հայտարկված «MILANO» բառային ապրանքային նշանն ամբողջությամբ ներառված է գրանցված համակցված ապրանքային նշանի մեջ: Ինչ վերաբերում է Ձեր կողմից ներկայացված փաստարկներին, ապա տեղեկացնում ենք, որ «MILANO» անվամբ կարող է մակնշվել իտալական ծագում ունեցող արտադրանքը, իսկ այլ երկրի արտադրանքը նման մակնշմամբ սպառողին մոլորության մեջ կզգի ապրանքի ծագման և արտադրողի վերաբերյալ հարցում: Մերժման հարաբերական հիմքին անդրադառնալով, տեղեկացնում ենք, որ անկախ Ձեր կողմից նշված այն հանգամանքից, որ «PRADA MILANO» ապրանքային նշանի ներքո վաճառվող ծխախոտային արտադրանք գոյություն չունի, դա բնավ չի նշանակում, որ Հայաստանի Հանրապետության տարածքում դեռևս 1997թ. պահպանություն ստացած և 07.09.2017թ. գրանցման գործողությունը կրկին անգամ երկարաձգված «MILANO» բառը ներառող ապրանքային նշանը կորցրել է իր ուժը:

Կոլեգիայի անդամը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթները բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ նշանում առկա «MILANO» բառային տարրը սպառողին մոլորության մեջ կզգի արտադրողի վերաբերյալ հարցում և այն նաև շփոթելու աստիճան նման է նույնատիպ ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում միջազգային գրանցման հիման վրա պահպանվող «PRADA MILANO» (PRADA S.A. 23, rue Aldringen L-1118 Luxembourg (LU), IR 681246, 18.08.1997) համակցված ապրանքային նշանին:

Բողոքարկողը շարունակում էր մնալ այն տեսակետին, որ ներկայացված ապրանքային նշանը կարող է գրանցվել:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Ներսես Իսաջանյանի կողմից ներկայացված՝ «MILANO» (No20181830) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ

ՆԱԻՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ